ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝	Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ
Առարկա՝	Պատմություն
Հետազոտող ուսուցիչ՝	Մերի Ավետիքյան
Ուսումնական հաստատություն՝	Դ. Հովեսեփյանի անվան հ. 191 հիմնական դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____ 3

ԳԼՈՒԽ 1: Ընտանիքի հոգեբանություն

1.1 «Ընտանիք» հասկացությունը _____ 4

1.2 Դեռահասի դաստիարակությունը ընտանիքում _____ 6

ԳԼՈՒԽ 2: Կոնֆլիկտներ

2.1 Կոնֆլիկտային ընտանիքը, որպես անբարենպաստ ընտանիք _____ 8

2.2 Կոնֆլիկտային ընտանիքների դեռահասների սոցիալ-հոգեբանական հարմարման դժվարությունները _____ 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ _____ 16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ ամուր և բարեկեցիկ երկիր կառուցելու համար պետք է ունենալ զարգացած հասարակություն: Իսկ յուրաքանչյուր հասարակության հիմք է ծառայում ընտանիքը: Առողջ և ամուր ընտանիք ստեղծելու համար պետք են գիտակից մարդիկ, ովքեր ապագայում իրենց երեխային կկարողանան կրթել ու դաստիարակել սիրո և համերաշխության, հոգատարության և նվիրվածության մթնոլորտում, որը կհանգեցնի դեռահասի հոգեկան ներդաշնակությանը: Այս ներուժը կնպաստի տվյալ դեռահասի, որպես լիիրավ և ինքնաբավ անհատականության ձևավորմանը: Անձի անհատականության հիմքերը դրվում են ընտանիքում: Ընդունված է, որ ընտանիքը համարվում է կրթության և սոցիալականացման գլխավոր ինստիտուտ: Այն, ինչ մարդը ձեռք է բերում ընտանիքում, նա պահպանում է իր հետագա ողջ կյանքի ընթացքում:

Հետազոտական աշխատանքի նպատակ:

Ուսումնասիրել ընտանիքի հոգեբանությունը, ընտանիքում առկա կոնֆլիկտները և դրանց դերը դեռահասների հոգեկան և ֆիզիկական առողջության վրա:

Հետազոտական աշխատանքի խնդիրներ:

- Ուսումնասիրել ընտանիքի դերն ու նշանակությունը արդի հասարակության մեջ
- Սահմանել ընտանիքի տեսակները և գործառույթները
- Հետազոտել դեռահասի դաստիարակությունը կոնֆլիկտային ընտանիքում

Հասարակության մեջ լարվածությունը հանգեցրել է՝ ընտանիքում կոնֆլիկտների աճին, մարդու սթրեսակայունության նվազման, բացասական բնույթի զգացմունքների կուտակման, որոնք հաճախ հանգեցնում են ուրիշների կամ իրենց վրա ուղղված ագրեսիայի: Կոնֆլիկտային ընտանիքները հանգեցնում են դեռահասի ոչ առողջ հոգեբանական զարգացմանը, ինչը նպաստում է թերի զարգացվածության աստիճանի հասարակության ձևավորմանը:

ԳԼՈՒԽ 1: Ընտանիքի հոգեբանություն

1.1 «Ընտանիք» հասկացությունը

Բազմաթիվ գիտական աշխատանքներ են նվիրվել ընտանիքի ամենատարբեր և միշտ էլ օրախնդիր հիմնահարցերին: Ընտանիքի վերաբերյալ արտաքուստ կարծես թե ամեն ինչ հայտնի է ու պարզ, սակայն այն նույնքան պարզ ու նույնքան բարդ է, որքան ինքը՝ հասարակությունը: Ընտանիքի հասարակության հետ կապն առանձնահատուկ նշանակություն ունի անձի զարգացման, նրա մարդկային ճակատագրի համար: Եվ պատահական չէ, որ բոլոր հասարակական ֆորմացիաները շահագրգիռ են ընտանիքի կյանքի բովանդակության կառուցվածքի նկատմամբ: Չափազանցրած չենք լինի, եթե պնդենք, որ ընտանիքը, դրա յուրաքանչյուր տեսակը քաղաքակրթության զարգացման էական ցուցանիշ է, հասարակության կերպի սոցիալ-հոգեբանական հայելին:

Ընտանիքը, ինչպես գիտենք անձանց և նրանց փոխկապակցված կարգավիճակների ու դերերի ամբողջություն է: [1]

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է: Ընտանիքը, մայրությունը և մանկությունը գտնվում են հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո:

Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության մի առանձին ճյուղ, ուսումնասիրվել է բազմաթիվ հոգեբանների կողմից: Ինչպես հայտնի է ժամանակակից գրականությունից ընտանեկան կյանքին նախապատրաստելու կարևոր ուղղություններից մեկն այն է, որ աղջիկներն ու պատանիները հասկանան, որ ամուսնությունը ոչ թե ընտանեկան երջանկությունն ընտրելու ավարտն է, այլ նրա սկիզբը: Յուրաքանչյուր երիտասարդ մինչ ամուսնանալը պետք է տեղեկացվի, թե ինչին կարող է նա բախվել ամուսնական կյանքի ընթացքում: Եվ որպեսզի ընտանիքը լինի բարեհաջող, ապա բոլոր պատկերացումները պետք է լինեն համատեղ, որպեսզի ամուսիններից յուրաքանչյուրի վարքը չհակադրվի մյուսի պատկերացումներին: Զուգընկերների դերերը և՛ կնոջից, և՛ ամուսնուց պահանջում են ընտանիքում տնտեսումը, երեխաների հանդեպ պատասխանատվությունը: Հասարակության համար կարևոր է ոչ միայն ամուսնության կայունության փաստը, այլև ներընտանեկան հարաբերությունների որակը, դրանց խանգարումների հետևանքները: Շատ էական է համարվում ընտանիքում անդամների միջև աֆեկտիվ կապերը: Միջանձնային հարաբերությունները սուբյեկտների փոխադարձ պատրաստակամությունն է

որոշակի փոխգործողությունների տիպին: Հուզական կայունությունը պայմանավորված է ամուսինների զգացմունքներով (սեր, համակրանք, հարգանք): Որպես կանոն, երեխաները ծնողների գործերը և առօրյան դարձնում են ավելի հաճելի: Ծնողների վերաբերմունքն իրենց երեխաների նկատմամբ շատ դեպքերում տարբեր է: Այժմ երեխաներով շատ ընտանիքներում կարելի է տեսնել, որ մեծերին հարգում են, իսկ փոքր երեխաներին երես են տալիս: Միջին տարիքի երեխաներին, որոնց մոռանում են, հիմնականում ավելի լավ մարդիկ են դառնում:

Ժամանակակից ընտանիքի տեսակներն են.

- **Միջուկային** - տղամարդ, կին, երեխաներ
- **Ընդլայնված** - ամուսինները, երեխաները և ամուսիններից մեկի ծնողները
- **Նահապետական** - ծնողները, իրենց երեխաների, թոռների ու ծոռների հետ

Ըստ հարաբերությունների՝ ընտանիքները լինում են.

- Ժողովրդավարական - ընտանիքներում ձևավորվում է հոգեբանական առողջ միջավայր՝ դաստիարակվում են լիարժեք, առողջ հոգեբանություն ունեցող անհատներ
- Ամբողջատիրական - այսպիսի ընտանիքներում են ձևավորվում դաստիարակության համար անհրաժեշտ ոչ լիարժեք պայմաններ:

Ընտանիքում կարևոր են նաև գործառույթների կատարումը: Դրանք են.

- **սերնդափոխության,**
- **դաստիարակչական,**
- **ֆինանսական,**
- **սոցիալական,**
- **տնտեսական** [2]

Ընտանիքը որպես սոցիալական ինստիտուտ տարբերվում է սոցիալական խմբերից, քանի որ սոցիալական խումբը բաղկացած է որոշակի հավասար իրավունքներ ու դիրք ունեցող անդամներից, մինչդեռ ընտանիքում կան մեկ, երբեմն էլ մի քանի սերունդների ներկայացուցիչներ, որոնց միջև ձևավորվող հարաբերությունները միատեսակ չեն: [3]

Սոցիալականացման գործընթացում լուծվում են երկու խումբ խնդիրներ ՝ անձի սոցիալական հարմարման և սոցիալական ինքնավարացման: Ըստ էության հակասական և միաժամանակ դիալեկտիկորեն միասնական այդ խնդիրների լուծումն

էապես պայմանավորված է արտաքին ու ներքին շատ գործոններով: Սոցիալական հարմարումը ենթադրում է անհատի ակտիվ ընտելացում հասարակական միջավայրի 9 պայմաններին, իսկ սոցիալական ինքնավարացումը՝ դեպի իրեն կողմնորոշումների ամբողջության իրացումը, կայունությունը վարքագծում և հարաբերություններում, ինչը համապատասխանում է իր ինքնագնահատականի մասին անձի պատկերացմանը: Սոցիալական հարմարման և սոցիալական ինքնավարացման խնդիրների լուծումը կարգավորվում է «լինել բոլորի հետ» և «մնալ ինքն իր հետ» թվացյալ հակասական դրդապատճառներով: Անտարակույս, մարդու սոցիալականացման արդյունքը նույնպես հասարակական ակտիվությունն է՝ սոցիալական գործունեության իրականացվող պատրաստակամությունը, որը դրսևորվում է մարդու հասարակական հարաբերությունների ոլորտներում: Այսպիսով մարդու սոցիալականացման մասին վկայող չափանիշներն են սոցիալական հարմարվածությունը, սոցիալական հարմարվողականությունը, սոցիալական ինքնավարությունը և սոցիալական ակտիվությունը: Սոցիալականացման գործընթացը ենթադրում է նշված բոլոր երեք՝ գործունեության հաղորդակցման ինքնաճանաչման ոլորտների փոփոխությունների միասնությունը: [4]

1.2 Երեխայի դաստիարակությունը ընտանիքում

Սկսած 18 - րդ դարից՝ ընտանեկան դաստիարակության առնչությամբ առաջ եկան մի քանի ուղղություններ: **Առաջինի ներկայացուցիչ** Պեստալոցին սովորողի համար հայրական տունը համարում էր բնական հիմք: Նա նշում էր, որ սովորողի դաստիարակությունն այստեղ տեղի է ունենում բնական ճանապարհով: Միաժամանակ նա չէր բացառում ուսումնական հաստատությունների դերը դաստիարակության գործում: **Երկրորդ ուղղության ներկայացուցիչը** անգլիացի Օուենն էր: Նա առավելություն էր տալիս պետական միասնական դաստիարակությանը: Նշում էր, որ տունը և տնային դաստիարակությունը կարող են դառնալ էգոիզմի հիմք: Նոր ժամանակներում, սակայն, մեծ մտածողներն ու հոգեբաններն առաջ քաշեցին ընտանիքի, ուսումնական հաստատության և պետության միասնական կարևորությունը սովորողի դաստիարակության գործում: Ըստ դրա էլ առաջ եկավ **երրորդ ուղղությունը**: Սրա ներկայացուցիչները միակարծիք էին, որ միասնական պետք է աշխատեն ընտանիքը, դպրոցը և հասարակությունը: Իհարկե, հիմքն ընտանիքն է, որն ավելի լավ գիտի սովորողի առանձնահատկություններն ու

նրբությունները: Կոմենսկին ասում էր. «Երեխայի մեջ հաստատուն է կյանքի առաջին տարիներին արմատավորվածը»: [5]

Հայտնի է, որ ընտանիքը ամենալավ միջավայրն է երեխայի խնամքի և դաստիարակության համար, քանի դեռ այնտեղ ապահովված է նրա պաշտպանությունը: Կապվածության և սիրո հարաբերությունները բարենպաստ և անհրաժեշտ նախադրյալներ են երեխայի անձի նորմալ ձևավորման, զարգացման, ընտանիքի անդամների փոխհարաբերությունների կառուցման համար: Կան այնպիսի որակներ, նորմեր, որոնք երեխայի մեջ պետք է դաստիարակել ընտանիքում, քանի որ նույնիսկ մանկավարժները չեն կարող դրանք այնպես իրականացնել, ինչպես ծնողները, օրինակ՝ մարդասիրություն (հումանիզմ), նրբանկատություն, անկեղծություն, նվիրվածություն, հոգատարություն և այլն: Այս որակները երեխաների մեջ դաստիարակելու համար կարելի է օգտագործել ընտանեկան ավանդույթներ, սովորույթներ ու միջոցառումներ, որոնք շատ ավելի օգտակար կարող են լինել, քան հազարավոր քարոզներն ու խրատները:

Այսօր երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային հանրության ջանքերի համախմբումը և բազմաթիվ հուշագրերի ընդունումը հանգեցնում են խնդրի ձևակերպմանը և լուծման հարցերում մոտեցումների միասնականացման պաշտպանական համանման տեխնոլոգիաների մշակման և ներդրման: Ակնհայտ է նաև, որ հասարակությունը բավականաչափ տեղեկացված չէ չարաշահման և բռնության հետևանքների մասին: Այսինքն, երեխայի հանդեպ դաժանության նկատմամբ դեռևս ժխտողական վերաբերմունք չկա: Փաստորեն, խիստ դատապարտվում են միայն այն դեպքերը, երբ ֆիզիկական ծանր վնասվածքներ կամ մահ է արձանագրվում: Մնացած դեպքերում հայ ընտանիքը փորձում է առաջ տանել «իմ երեխան իմ սեփականությունն է» վտանգավոր մտայնությունը: [6]

ԳԼՈՒԽ 2: Կոնֆլիկտներ

2.1 Կոնֆլիկտային ընտանիքը, որպես անբարենպաստ ընտանիք

Վ. Ցելույկոն իր «Психология современной семьи» գրքի մեջ նշում է, որ ընտանիքը մարդու կյանքում առաջին սոցիալական խումբն է, որի շնորհիվ նա հաղորդակից է դառնում մշակույթի արժեքներին, յուրացնում է առաջին սոցիալական դերերը, ձեռք է բերում հասարակական վարքագծի փորձ: Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է, որպեսզի այդ շփումը լինի «որակյալ»:

Ընտանիքի գործառույթներն են՝

- Վերարտադրողական
- Դաստիարակչական
- Տնտեսական և կենցաղային
- Հոգևոր կապի ստեղծման և պահպանման
- Սոցիալական կարգավիճակի ապահովման
- Հանգստի կազմակերպման
- Զգացմունքային [7]

Սակայն ոչ բոլոր ընտանիքներում է, որ ապահովում են կայուն և դրական միջավայր ընտանիքում:

1. Ընտանեկան անապահովության ձևերն ունեն վառ արտահայտված բնույթ, դրսևորվում են միաժամանակ ընտանիքի կենսագործունեության մի քանի ոլորտներում, օրինակ ՝ սոցիալական և նյութական մակարդակներում: Ընտանիքում գերակշռում է անբարենպաստ հոգեբանական մթնոլորտ, եթե՝ երեխան ֆիզիկական և էմոցիոնալ մերժվածություն է զգում ծնողների կողմից, նրա մոտ առաջանում է ամոթ իր և շրջապատի, ծնողների հանդեպ, վախ իր ներկայի և ապագայի հանդեպ: [8]
2. Մ. Ա. Գալագուզովան անբարենպաստ ընտանիքը բնութագրում է որպես ցածր սոցիալական կարգավիճակ ունեցող ընտանիք՝ կենսագործունեության կամ միաժամանակ մի քանի ոլորտներում, որոնք չեն կարողանում կատարել գործառույթները: Այսպիսի ընտանիքների հարմարվողական ունակություններն էապես նվազած են, երեխայի ընտանեկան դաստիարակության գործընթացն ընթանում է մեծ դժվարություններով, դանդաղ, քիչ արդյունավետ: [9]
3. Տ. Ի. Շուլգիի տեսակետը հետևյալն է՝ «Անբարենպաստ ընտանիքն այն ընտանիքն է, որտեղ երեխան զգում է անհանգստություն, սթրես, անտեսում

մեծահասակների կողմից, ենթարկվում է բռնության կամ դաժան վերաբերմունքի: Նման ընտանիքի գլխավոր բնութագիրը երեխայի հանդեպ սիրո բացակայությունն է» [10]

4. Ըստ Վ. Մ; Ցելույկոյի՝ «Անբարենպաստ ընտանիքն այն ընտանիքն է, որտեղ խախտված է ընտանեկան կառուցվածքը, արժեզրկվում կամ անտեսվում են հիմնական ընտանեկան գործառույթները, առկա են դաստիարակության ակնհայտ կամ թաքնված թերություններ, ինչի արդյունքում հայտնվում են "դժվար" երեխաներ» [11]

Ինչպես նաև տարբեր հեղինակներ առաջարկել են անբարենպաստ ընտանիքների վերաբերյալ իրենց դասակարգումները, այսպես օրինակ Վ.Վ. Զիկրատովը առանձնացնում է անբարենպաստ ընտանիքների հետևյալ տեսակները՝

- Դաստիարակչական ունակությունների պակաս ունեցող ընտանիքներ
- Բարոյականորեն անբարենպաստ ընտանիքներ
- Կոնֆլիկտային ընտանիքներ [12]

Լ. Ս. Ալեկսեվան իր աշխատանքում տալիս է հետևյալ դասակարգումը՝

- Ամորալ ընտանիքներ
- Մանկավարժական գիտելիքներ չունեցող ընտանիքներ
- Կոնֆլիկտային ընտանիքներ [13]

Ինչպես նաև Վ.Մ Ցելույկոն իր աշխատանքներում անդրադառնալով անբարենպաստ ընտանիքների դասակարգմանը առանձնացրել է երկու հիմնական խումբ, որոնք իրենց հերթին բաժանվում են մի քանի ենթախմբերի: Այդ երկու մեծ խմբերն են՝

- Արտահայտիչ անբարենպաստ ընտանիքներ
- Արտաքինից պատկառելի ընտանիքներ [14]

Ինչպես նկատեցինք Լ. Ալեկսեվայի, Վ. Զիկրատովի դասակարգումների մեջ անապահով ընտանիքի տեսակ է համարվում նաև կոնֆլիկտային ընտանիքը: Կոնֆլիկտային ընտանիքի մասին խոսել են Վ. Մ. Ցելույկոն, Լ.Ալեկսեվան, Վ.Զիկրատովը և Գ. Բոչկարեվան:

Ըստ Վ.Մ. Ցելույկոյի՝

«Կոնֆլիկտային են կոչվում այնպիսի ընտանիքներ, որտեղ մշտապես առկա են այնպիսի ոլորտներ, որտեղ բախվում են ընտանիքի բոլոր կամ մի քանի անդամների շահերը, մտադրությունները, ցանկությունները, ծնում են ուժեղ և երկարատև բացասական հուզական վիճակներ, ընտանիքի անդամների կողմից միմյանց հանդեպ չդադարող անբարյացակամություն»:

Ինչպես նշում է Վ. Ցելույկոն ապակառուցողական կոնֆլիկտները նման ընտանիքների քրոնիկ վիճակն է: Կոնֆլիկտային ընտանիքները կարող են լինել ինչպես աղմկոտ, սկանդալային, որտեղ բարձր ձայները, միմյանց դեմ տրամադրվածությունը դառնում է ամուսինների փոխհարաբերությունների նորմա, այնպես էլ հանգիստ, որտեղ ամուսնական հարաբերությունները տարբերվում են լիակատար օտարմամբ, ցանկացած փոխազդեցությունից խուսափելու ձգտումով:

Կոնֆլիկտային ընտանիքները Լ. Ալեկսեվան նկարագրում է, այնպիսի ընտանիքներ, որտեղ վերբալ ագրեսիան շատ բարձր մակարդակի վրա է գտնվում: Նման ընտանիքներում ամեն օր կամ շատ հաճախ լինում են վիճաբանություններ, իսկ ընտանիքի անդամները միմյանց հետ շփվում են բարձր ձայնի միջոցով:

Վ. Զիկրատովը կոնֆլիկտային ընտանիքը բնութագրում է, որպես ընտանեկան լարված միջավայր ծնողների միջև:

Գ. Բոչկարեվան նշում է, որ կոնֆլիկտային ընտանիքները այն ընտանիքներն են, որտեղ ծնողները շատ կոպիտ են շփվում իրենց երեխաների հետ, ճնշում են նրանց կամքը և չեն հարգում երեխաների «ես»-ը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով անբարենպաստ ընտանիքների և հատկապես կոնֆլիկտային ընտանիքների մասին տրված բացատրությունները, կարող ենք տեսնել մեկ ընդհանուր կապ՝ կոնֆլիկտային ընտանիքներում խախտված է բարեկեցիկ էմոցիոնալ կապը ծնող-երեխա, ամուսին-կին փոխհարաբերություններում և դա տարատեսակ ձևով ազդում է անձի սոցիալ-հոգեբանական զարգացման վրա:

Հաջորդ գլխում կքննարկենք, թե ինչ դժվարությունների կարող է հանդիպել կոնֆլիկատյին ընտանիքի երեխան սոցիալ-հոգեբանական հարմարման ընթացքում:

2.2 Կոնֆլիկտային ընտանիքների դեռահասների սոցիալ-հոգեբանական հարմարման դժվարությունները

Դեռահասի սոցիալական հարմարումը դա նրա հասարակությանը, նորմերին հարմարվան գործընթացն է: Այն ընտանիքներում, որտեղ մթնոլորտը բացասական է, առկա են անընդհատ վեճեր, խախտված է զգացմունքային կապը, այն հանգեցնում է էմպատիայի ցածր մակարդակի, էմոցիոնալ ինտելեկտի նվազման և այլն:

Այն երեխաները, և կապ չունի երեխայի տարիքը, ովքեր զգում են շփման պակաս մեծահասակների հետ, ունենում են խնդիրներ ինքնուրույնության հետ կապված, հասակակիցների հետ շփման ժամանակ, ինչպես նաև ավելի քիչ են հետաքրքվում արտաքին աշխարհով:

Նրանց համար բավականին դժվար է սեփական ապագայի պլանավորման, մասնագիտության ընտրության, ինչ-որ բանի ձգտման հարցերը: Շատ հաճախ կարելի է դիտարկել ուսուցման դժվարությունները, դպրոցական ծրագրից նոր ուսումնական նյութի յուրացման դժվարություններ, կարգապահության խախտումներ: Այսպիսով կարող ենք ասել, որ անբարենպաստ կամ կոնֆլիկտային ընտանիքի երեխայի վրա՝ ընտանիքում առկա լարվածությունը, ազդում է հոգեկան զարգացման և առողջության վրա:

Վ. Ցելույկոն իր «Быть вместе нельзя расставаться. Как спасти отношения» գրքում նշում է, որ ընտանեկան կոնֆլիկտայնությունը երեխայի վրա կարող է ազդել մի քանի ձևով՝

1. Մի կողմից, երեխան վաղ մանկությունից դառնում է ծնողական տարաձայնությունների, վեճերի և սկանդալների մշտական վկան
2. Մյուս կողմից, նա կարող է դառնալ հակամարտող ծնողների հուզական լիցքաթափման օբյեկտ, որոնք իրենց խնդիրները խորացնում են, իսկ միմյանց հանդեպ ունեցած դժգոհությունը ուղղում են դեպի երեխան:
3. Բացի այդ, երեխան կարող է դառնալ ծնողական վեճերի լուծման յուրօրինակ գործիք, երբ յուրաքանչյուրը փորձում է ամրապնդել իր դիրքերը երեխային իր կողմը "քաշելու" միջոցով: [15]

Աննա Կոսենկոն իր հոդվածում նշում է, որ յուրաքանչյուր տարիքի երեխայի համար ընտանիքում կարևոր է լինել սիրված և պաշտպանված: Նրանք իրենց պաշտպանվածությունը կապում են մեծահասակների հետ հարաբերություններում կայունության հետ: Հակամարտությունները, վիճաբանության, նույնիսկ պարզապես շատ հաճախակի դժգոհության արտահայտությունը զրկում է նրանց անվտանգության զգացողությունից: Երբ երեխան ընտանիքում իրեն չի զգում ապահով, ապա դա հանգեցնում է պաթոլոգիական վախերի, երկարատև լարվածության, ծանր, նույնիսկ մղձավանջային երազների, ինքնամփոփության, հասակակիցների հետ շփվելու անկարողության և այլ տհաճ հետևանքների, ինչը, ի վերջո, կարող է երեխային դարձնել "հոգեկան հաշմանդամ", մի մարդ, ով վախենում է որևէ ինքնուրույն գործողություն կատարել: [16]

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչպես են կոնֆլիկտները ազդում դեռահասների վարքի ձևավորման վրա: Իրադարձությունների զարգացման մի քանի հնարավոր զարգացում կա՝

1. Դեռահասը սկսում է վախենալ ցանկացած հարցի վերաբերյալ կարծիք հայտնել, քանի որ գիտի, որ կարող է ոչ միայն չհանդիպել պատշաճ

հասկացողության, այլ նույնիսկ առաջացնել ծնողի զայրույթը: Երեխաների հոգեկան տրավմատիզացիան նրանց կողմից դիտարկվող ընտանեկան կոնֆլիկտների միակ արդյունքը չէ: Երբ ծնողները կոնֆլիկտային վիճակում են, չեն նկատում, թե ինչպես է մեծանում երեխաների օտարումը և ակնկալվող սիրո ու հարգանքի փոխարեն նրանք կարող են նրանցից ստանալ հակակրանք, իսկ երբեմն՝ խորը ատելություն: [17]

2. Դեռահասը սկսում է դրսևորել ագրեսիա, անհամաձայնություն ծնողների կարծիքի հետ: Այս ամենը ինքնին հատուկ են դեռահասության տարիքին, սակայն արտաքին գործոնի առկայության դեպքում նման դրսևորումները ավելի են սրվում:

Ինչպես նաև ուսումնասիրելով տարբեր հեղինակների կարող ենք առանձնացնել հետևյալ հատկանիշը, կոնֆլիկտային ընտանիքներում հնարավոր են իրավիճակներ, երբ ծնողներն ակամայից երեխաների վրա են պրոյեկտում միմյանց նկատմամբ ունեցած հուզական վերաբերմունքը: Հակամարտության նման տեղաշարժը նկատվում է այն դեպքերում, երբ կոնֆլիկտային իրավիճակը երկար ժամանակ մնում է չլուծված : Բացասական զգացումներ դրսեւորելով միմյանց նկատմամբ ոչ թե ուղիղ, այլ միջնորդավորված, երեխայի միջոցով, նրա վրա շորթելով իր գրգռվածությունը եւ թշնամական զգացմունքները, ծնողները դրանով իսկ նվազեցնում են լարվածությունը իրենց հարաբերություններում: Նման դեպքերում նրանց միջեւ հակամարտությունը, որպես այդպիսին, բացակայում է : Երեխաների համար դա էլ ավելի սթրեսային իրավիճակ է, քանի որ ծնողները, տեսանելիություն ստեղծելով, որ երեխա են դաստիարակում, փորձում են միմյանց դաստիարակել՝ երեխայի հանդեպ ցուցաբերելով անհանդուրժողականություն, մաքսիմալիզմ, անվստահություն: [18]

Ընտանեկան կոնֆլիկտի հնարավոր տարբերակ է, երբ երեխաները հանդես են գալիս որպես ամուսնական տարաձայնությունների լուծման յուրօրինակ գործիք:Կարող է լինել այնպես, երբ ամուսնու հետ իրենց հարաբերություններից չբավարարված կինը փոխհատուցում է այդ անբավարարվածությունը երեխաների վրա բարկանալով՝ հրահրելով նրանց մոտ հուզական և վարքագծային խախտումների: Իսկ հայրը, դժգոհելով երեխաների վարքագծից, փորձում է խստացնել իր պահանջները, ինչը, սակայն, հանդիպում է մոր հակազդեցությանը՝ ուժեղացնելով ամուսնու հանդեպ նրա բացասական զգացմունքները : Որպես հետեւանք, երկու դեպքում էլ երեխան զգում է տագնապ, քանի որ չի կարողանում համապատասխանել ծնողներից ոչ մեկի սպասելիքներին:

Այսպիսով ընդհանրացնելով ստացած գիտելիքները կարող ենք առանձնացնել հետևյալ մի քանի հետևանքները, որոնց հանդիպում են այն երեխաները, ովքեր մեծացել են կոնֆլիկտային ընտանիքում.

- Կոնֆլիկտային ընտանիքների երեխաները դուրս են գալիս խորը ներանձնային կոնֆլիկտներով: Հետևաբար, դա կարող է հանգեցնել դեպրեսիայի:
- Ձևավորվում է միջանձնային փոխազդեցությունում վարքի սցենար: Դա արտահայտվում է ստեղծված ընտանիքներում եւ իրենց երեխաների վրա, քանի որ ընտանիքը, որտեղ երեխան մեծացել է, իր ապագա ընտանիքի օրինակն է դնում: Երեխան առաջին անգամ ծանոթանում է, յուրացնում է հոր եւ մոր, ամուսնու եւ կնոջ, տղամարդու եւ կնոջ դերերը ամենօրյա շփումների, ծնողների, մտերիմների հետ շփվելու գործընթացում:
- Ձևավորվում է որոշակի մտածելակերպ՝ բացասական, բարձր քննադատությամբ : Այս գործընթացի հետեւանքները ազդում են մարդու կենսագործունեության վրա, զգալիորեն վատթարացնելով նրա կյանքի որակը:
- Ձևավորվում են բնավորության որոշակի գծեր ՝ անինքնավստահություն, անտարբերություն, ագրեսիվություն: [19]

Տվյալ աշխատանքի շրջանակներում մենք ուսումնասիրելու ենք ագրեսիվությունը, որպես սոցիալ-հոգեբանական հարմարման դժվարություն՝ կոնֆլիկտային ընտանիքներից սերող երեխաների մոտ, այդ իսկ պատճառով մեր աշխատանքի հիմնավորության համար մենք կուսումնասիրեք կոնֆլիկտային ընտանիքների երեխաների մոտ դրսևորվող ագրեսիվության վերաբերյալ գրականություն:

Ագրեսիվ վարքի յուրացումը հաճախ տեղի է ունենում հենց ընտանիքում: Ընտանիքը կարող է միաժամանակ ցույց տալ ագրեսիվ վարքի մոդելներ և ապահովել դրա ամրապնդումը երեխայի մոտ: Հենց ընտանիքն է երեխայի անցնում առաջնային սոցիալականացումը: Ընտանիքի անդամների միջեւ փոխհարաբերությունների օրինակով նա սովորում է համագործակցել այլ մարդկանց հետ, սովորում է այնպիսի վարքագիծ եւ հարաբերությունների ձեւեր, որոնք կպահպանվեն իր պատանեկության տարիներին եւ հասուն տարիներին:

Երեխաների ագրեսիվ վարքագծի հավանականությունը կախված է նրանից, թե արդյոք նրանք բախվում են իրենց տանը ագրեսիայի դրսեւորումների հետ: Իսկ դեռահասների մոտ ագրեսիան մի կողմից այդ տարիքի համար նորմալ երեւույթ է, իսկ մյուս կողմից այն կարող է վերաճել դեռահասի ինքնության կայուն գծի, որը հանգեցնում է երեխայի բնավորության մեջ դեվիանտվարքի տարբեր ձեւերի

ձեւավորմանը եւ արմատավորմանը, ինչպիսիք են թմրամոլությունը, հարբեցողությունը և ինքնասպանության փորձերը և այլն:
Հետազոտողներն ընդգծում են, որ դեռահասների ագրեսիվության վրա ազդում է դաստիարակությունը բազմազավակ ընտանիքում (М. Раттер, 1987), ոչ լրիվ ընտանիքներում (П. Массен, 1987; Й. Шванцара, 1978), ծնողների բաժանությունը (М. Ричардс, 1984; К. Флейк-Хобсон и др., 1993), խանդը՝ ընտանիքի անդամների նկատմամբ (Г.Т. Хоментаускас, 1989). Ռ. Բերոնը եւ Դ. Ռիչարդսոնը նշում են, որ ագրեսիվ վարքագծի համար նշանակություն ունի երեխայի փոխհարաբերությունները եղբայրների եւ քույրերի հետ: [20]
Երեխայի ագրեսիվ վարքի առաջացումն ու ամրապնդումը կախված է ծնողների կողմից ջերմության եւ քնքշանքի պակասից, երեխաների ագրեսիայի նկատմամբ ծնողների ներողամիտ վերաբերմունքից, երեխաների հանդեպ անտարբերությունից(В.В. Столин, 1983; А.С. Спиваковская, 1988).
Օ. Դ. Սիտկովսկայան (1990) ընտանեկան դաստիարակության եւ ընտանիքում տիրող իրավիճակի ազդեցության առանձնահատկությունները դեռահասների ագրեսիվ վարքագծի վրա ուսումնասիրելիս, պարզել է, որ այդ ընտանիքներում տարածված է ալկոհոլի չարաշահումը, վեճերը, սկանդալները եւ ծնողների միջեւ ծեծկռտուքը:

1. Մեկ այլ առանձնահատկությունն այն է, որ մոր կողմից երեխայի ագրեսիվ վարքագծի նկատմամբ ներողամիտ վերաբերմունք է առկա, ինչը նպաստում է վարքագծի եւ ագրեսիվ վարքագծի նորմերի յուրացմանը և դրական վերաբերմունքի: Այդ ընտանիքներում մեծ տարածում ունեն հոր ագրեսիվ վարքը ընտանիքի մյուս անդամների նկատմամբ, նրա թշնամանքը՝ երեխայի նկատմամբ ֆիզիկական դաժան պատիժների կիրառման հետ միասին: Հոր վարքագծի ընդօրինակումը նպաստում է ագրեսիվ վարքի, ընդհանրապես մարդկանց նկատմամբ թշնամական վերաբերմունքի ձեւավորմանը [21]
2. Ընտանեկան անբարենպաստ վիճակը, սկանդալները, բռնության տեսարանները, դաժան պատիժները, երեխաներին ծեծելը և այլն՝ մեծացնում են հակասոցիալական ագրեսիվ վարքագծի զարգացման վտանգը [22]

Ընդ որում, կարևոր են ոչ միայն ընտանիքի անդամների ագրեսիայի դրսևորումները միմյանց նկատմամբ, այլև ծնողների վերաբերմունքը երեխայի վարքագծի նկատմամբ:

Ծնողները կարող են խրախուսել երեխաների ագրեսիվությունը կամ իրենց սեփական վարքի միջոցով, կամ դրական վերաբերմունքը ձևավորեն երեխայի մոտ, օրինակ եթե դիմեն ծեծի միջոցով պատժին:

Ուսումնասիրելով այն սոցիալ-հոգեբանական հարմարման դժվարությունները, որոնց հանդիպում են կոնֆլիկտային ընտանիքի երեխաները կարող ենք փաստել այն մասին, որ դրանք ուղղակի կամ անուղղակի ձևով ազդում են անձի ինչպե՞ս ներկա, այնպես էլ ապագա կյանքի վրա: Ինչպես նաև մեր ուշադրությունն է գրավել կոնֆլիկտային ընտանիքների դեռահասների մոտ դրսևորվող ագրեսիվությունը, այն պատճառով, որ ագրեսիվ վարքը տեսանելի է, այդ դրսևորումների հետ անհրաժեշտ է աշխատել, քանի որ հակառակ դեպքում այն կարող է ամրապնդվել մարդու բնավորության մեջ և հետագայում հանգեցնել բացասական արդյունքների: Այսպիսով այս հետազոտական աշխատանքի շրջանակներում ուսումնասիրեցինք կոնֆլիկտային ընտանիքների դեռահասների մոտ դրսևորվող ագրեսիան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքի գիտական գրականության ուսումնասիրության արդյունքում եկել ենք մի շարք եզրակացությունների.

- Համապատասխան անձանց միասնական, նպատակասլաց և հետևողական աշխատանքի և մեծ ջանքերի շնորհիվ է, որ հնարավոր է ձևավորել ներդաշնակ ընտանեկան միջավայր, որի առկայության դեպքում է հասարակությունը հարստանում լիարժեք անհատներով, իսկ պետությունը՝ խելացի, պատասխանատու քաղաքացիներով, ովքեր կկերտեն ապագան ու հետագայում կնպաստեն հայրենի երկրի շենացմանը,
- Ընտանիքում առողջ և դաստիարակված երեխա ձևավորելու համար ծնողները պետք է ստեղծեն հանգիստ, խաղաղ մթնոլորտ, հաստատեն բարիդրացիական հարաբերություններ ընտանիքի բոլոր անդամների հետ,
- Ժամանակակից ընտանիքի հոգեբանության շրջանակներում առանձնացնում ենք անբարենպաստ ընտանիքների մի քանի տեսակներ, որոնց թվին է պատկանում կոնֆլիկտային ընտանիքը,
- Կոնֆլիկտային ընտանիքի դեռահասի համար սոցիալ-հոգեբանական հարմարման դժվարությունները կայանում են նրանում, որ կոնֆլիկտային ընտանիքների երեխաները ընտանիքից դուրս են գալիս խորը ներանձնային կոնֆլիկտներով, ձևավորվում է միջանձնային փոխազդեցությունում վարքի սցենար՝ դա արտահայտվում է ստեղծված ընտանիքներում եւ իրենց երեխաների վրա, ձևավորվում է որոշակի մտածելակերպ՝ բացասական, բարձր քննադատությամբ : Այս գործընթացի հետեւանքները ազդում են մարդու կենսագործունեության վրա, զգալիորեն վատթարացնելով նրա կյանքի որակը: Ինչպես նաև նման ընտանիքներում դաստիարակվող երեխաների մոտ ձևավորվում են բնավորության որոշակի գծեր՝ անինքնավստահություն, անտարբերություն, ագրեսիվություն,
- Կոնֆլիկտային ընտանիքների երեխաները դրսևորում են ընտանիքի անդամներից մի քանիսի, կամ բոլորի հանդեպ բացասական վերաբերմունք, ընտանիքում խախտված են լինում զգացմունքային կապերը, որոնք հանգեցնում են օտարացման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հոգեբանությունը և կյանքը» հանդես, 2000թ, էջ 9, Սեդրակ Սեդրակյան, https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Hogebanutyun2000/2010(1-2).pdf?fbclid=IwAR2gEpEfauZ1Hr4a4eDs38bBtplPNi7wp5Dngfj6Y6uNa8jXe4WDTUjCD2A
2. «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2014թ., Հասարակագիտություն 10, էջ 164-169, Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան, Կ. Վարդանյան, Հ. Աղաջանյան, https://fliphtml5.com/fumf/erbi/%D5%80%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6_10/
3. Սեդրակյան Ս., Ընտանիքի հոգեբանություն, Երևան, 2011, էջ 220
4. Кон И. С., Социология личности, Москва, 1966, http://terra.ucoz.ae/_ld/2/205_--__.pdf
5. Յ. Ամիրջանյան, Ա. Սահակյան, Մանկավարժություն , Երևան , 2005, http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun.pdf
6. «Հոգեբանությունը և կյանքը» հանդես, 2000թ, Թագուհի Անդրեասյան, Անբարենպաստ ընտանիքների երեխաների անձնային առանձնահատկությունների կապը բացահայտ ագրեսիվ միտումների հետ, էջ 50, https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Hogebanutyun2000/2010(1-2).pdf?fbclid=IwAR2gEpEfauZ1Hr4a4eDs38bBtplPNi7wp5Dngfj6Y6uNa8jXe4WDTUjCD2A
7. Мудрик А.В. М893 Социальная педагогика: Учеб. для студ. пед. вузов / Под ред. В. А. Сластенина. - 5-е изд., доп. - М.: Издательский центр «Академия», 2005.200с., https://dl.booksee.org/genesis/164000/fab7b907c3804789f97bbd6935e79c5b/_as/[Mudrik_A.V.]_Socialnaya_pedagogika(BookSee.org).pdf
8. Целуйко Валентина Быть вместе нельзя расставаться. Как спасти отношения, https://psy.wikireading.ru/9345
9. Гагарина П.А. Социально – педагогические особенности воспитания ребенка в конфликтных семьях, https://scienceforum.ru/2018/article/2018004275
10. Коломинский Я.Л. Психология взаимоотношений в малых группах: общие и возрастные особенности». М., 2000.
11. Реан А.А. Психология личности: Социализация, поведение, общение. /А.А. Реан. – СПб: Прайм – Еврознак, 2004
12. Зикратов В.В. Дисфункциональная семья как предмет и объект исследования социальной педагогики

13. Алексеева Л.С. Работа с семьей как стратегическое направление деятельности учреждений социальной сферы // Отечественный журнал социальной работы. - 2011.
14. Целуйко В.М. Психология неблагополучной семьи: Книга для педагогов иродителей. / В.М. Целуйко - М.: Изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2006. - 272с. https://www.studmed.ru/celuyko-vm-psihologiya-neblagopoluchnoy-semi-kniga-dlya-pedagogov-i-roditeley_6f38b520352.html
15. Шелуханова Л.В. Семейна социализация; Сущность, содержание и проблемы https://cyberleninka.ru/article/n/semeynaya-sotsializatsiya-suschnost-soderzhanie-i-problemy
16. Реан А.А. Психология личности: Социализация, поведение, общение. /А.А. Реан. – СПб: Прайм – Еврознак, 2004
17. Шелуханова Л.В. Семейна социализация; Сущность, содержание и проблемы https://cyberleninka.ru/article/n/semeynaya-sotsializatsiya-suschnost-soderzhanie-i-problemy
18. Шелуханова Л.В. Семейна социализация; Сущность, содержание и проблемы https://cyberleninka.ru/article/n/semeynaya-sotsializatsiya-suschnost-soderzhanie-i-problemy
19. Алексеева Л.С. Работа с семьей как стратегическое направление деятельности учреждений социальной сферы // Отечественный журнал социальной работы. - 2011.
20. Ситковская О.Д. Мотивация агрессивного поведения несовершеннолетних преступников // Насилие, агрессия, жестокость. 1991. №1. С.81-87
21. Бандура А. Подростковая агрессия: Изучение влияния воспитания и семейных отношений. М.: Апрель, Пресс, ЭКСМО-Пресс, 2000. 508 с.
22. Степанов В.Г. Психология трудных школьников. М.: Академия, 2004. 320 с